


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՄԵՐԻՆ 15 ՏԱՐԻՄ



1943 թվականի նոյեմբերին Սովետական կառավարության որոշմամբ Հայկական ՍՍՌ-ում հիմնադրվեց Գիտությունների ակադեմիան, Ակադեմիան կազմակերպվեց Հայրենական Մեծ պատերազմի ծանր օրերին և հանդիսացավ Սովետական կառավարության՝ ղեկի ազգային կուլտուրայի բարգավաճումը ունեցած հողատարության փայլուն օրինակներից մեկը: Հայտնի էր ի պատմության մեջ Ակադեմիայի հիմնադրումը հանդիսանում է նրա մեծագույն նվաճումներից մեկը:

15 տարվա ընթացքում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան հասավ մեծ հաջողությունների և ոչ միայն դարձավ հայ ժողովրդի գիտական մտքի կենտրոնը, այլև հանաչվեց որպես գիտության խոշոր օջախ Սովետական Միության ժողովուրդների ու արտասահմանյան երկրների կողմից: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան կազմակերպվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի հիման վրա: Առաջին տարիներին մասնագետների թիվը համեմատաբար քիչ էր, իսկ գիտական աշխատանքներ ծավալելու համար շեղային համապատասխան պայմաններ:

հատկապես գիտական սարքավորում ու գիտական հիմնարկների համար անհրաժեշտ շենքեր: Ակադեմիայի նախագահությունը 15 տարվա ընթացքում մեծ աշխատանք տարավ գիտական կազմերի պատրաստման, գիտական սարքավորումների ձեռք բերման և գիտահետազոտական հիմնարկների համար շենքեր կառուցելու ուղղությամբ: Երկազմակերպման ժամանակ Գիտությունների ակադեմիան ունեցր շոքո բաժանմունք՝ Ֆիզիկո-մաթեմատիկական և բնական, Անասարանական, Գյուղատնտեսական և Հասարակական գիտությունների Այդ բաժանմունքներում կազմակերպվեցին 24 գիտահետազոտական հիմնարկներ:

Այժմ Ակադեմիայի սխեմայում գործում են 4 բաժանմունք՝ Ֆիզիկո-մաթեմատիկական, Տեխնիկական, Անասարանական և Հասարակական գիտությունների, որոնք ընդգրկում են 27 գիտահետազոտական հիմնարկներ: Ընդհանուր առմամբ նախագահությանը կից կազմակերպվել և դրժում են մի շարք հանձնաժողովներ՝ 1. Արտադրական ուժերի ուսումնասիրության խորհուրդը, 2. Ռեսուրսային կազմում գիտահետազոտական աշխատանքներ կուրդիանցնող խորհուրդը, 3. Բնա-

գիտությունների և տեխնիկայի պատմության հանձնաժողովը, 1. Բնության պաշտպանության հանձնաժողովը, 5. Աշխարհագրական ընկերությունը նման հաշվի առնելիս նաև այն, որ Ակադեմիայից Գյուղատնտեսության միջնորդության սխեման են փոխադրվել Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի հիմնարկները և այլ գերատեսչության՝ կառուցվածքների և շինանյութների ինտերտուտը, ապա պարզ կգտնես Ակադեմիայի գիտական հիմնարկների լիակատար

15 տարում թե՛ որակապետ և թե՛ քանակապես զգալիորեն աճել են գիտական կադրերը։ Այսպես, օրինակ՝ Ակադեմիայի հիմնադրման առաջին տարում գիտական աշխատողների թիվը կազմում էր 206, որից Ակադեմիայի իսկական անդամներ՝ 20, գիտությունների ղեկավար՝ 2, գիտությունների թեկնածու՝ 56 հոգի։ Գիտական աշխատողների մեծ մասը շունեին գիտության ղեկավարի կամ թեկնածուի աստիճան։ Այժմ Գիտությունների ակադեմիան ունի 34 ակադեմիկոսներ, որոնցից 32-ը անմիջականորեն կապված են Ակադեմիայի աշխատանքներին, 26 թողբալից-անդամներ, որոնցից Ակադեմիայում աշխատում են 22 հոգի, միայն գիտական աշխատակիցների թիվը կազմում է 680, Բոզի ակադեմիկոսներից և թղթակից-անդամներից ղեկավարի աստիճան ունեն 21, իսկ թեկնածուի աստիճան՝ 213 հոգի։

Տասնմեկ տեղում աճել է գիտատեխնիկական աշխատակիցների քանակը, 1943 թվականին եղած 40 հոգուց հասնելով 459-ի։ Անհամեմատ աճել են նաև Ակադեմիայի բյուջեն և այն դրամագրորդը, որոնք տրամադրվել են գիտա-հետազոտական աշխատանքներին, գիտական ապարատուրայի ձեռք բերմանը և կապիտալ շինարարությանը։ Այսպես, օրինակ՝ 1944 թ. Ակադեմիայի բյուջեն կազմել է 16 միլիոն 540 հազար ռուբլի, որից գիտա-հետազոտական աշխատանքներին տրամադրվել է 3 միլիոն 42 հազար ռուբլի, սարքավորումների ձեռք բերմանը՝ 595 հազար ռուբլի, իսկ կապիտալ շինարարությանը՝ 1 միլիոն 11 հազար ռուբլի։ 1953 թ. Ակադեմիայի բյուջեն կազմել է 71 միլիոն 864 հազար ռուբլի, սրանից գիտա-հետազոտական աշխատանքներին տրամադրվել է 9 միլիոն 800 հազար ռուբլի, գիտական սարքավորումների ձեռք բերմանը՝ 7 միլիոն 600 հազար ռուբլի, իսկ կապիտալ շինարարությանը՝ 20 միլիոն 808 հազար ռուբլի։ Բնական, որ իր գոյության բնթացքում Ակադեմիան հարբուտացել է մի շարք նոր սարքավորումներով, և նրա հիմնարկները հնարավորություն են ստացել ծավալելու գիտա-հետազոտական աշխա-

տանքներ, օգտագործելով ժամանակակից մեթոդները։ Այդ գումարների հաշվին մի շարք գիտական հիմնարկների համար կառուցվել են նոր շենքեր, ինչպես, օրինակ՝ Բյուրակների աստղադիտարանի, Ֆիզիկայի, Բուսաբանության, Որգանական բիմիայի, Ֆիզիոլոգիայի, Գենետիկայի ինստիտուտների, Միկրոբիոլոգիայի սեկտորի շենքերը, կառուցվել են նաև Կախազանության շենքեր և շուրջ բնական շենքեր։ Այժմ կառուցման պրոցեսում են Ֆիզիկայի ինստիտուտի զծով՝ էլեկտրոնային արտադրությունը, Նուրբ օրգանական բիմիայի, Մաթեմատիկայի և մեխանիկայի, Երկրաբանության ինստիտուտների շենքերը, ինչպես և 130 քանակաբանից սպաղիացած բնակելի նոր շենքեր։ Ղդալիսըն աճել է Ակադեմիայի գրադարանային ֆոնդը։ 1943 թ. գրադարանն ուներ 130 հազար միավոր դիրք, իսկ այժմ նրա զբաղյալ ֆոնդը հավասար է 1 միլ. 300 հազ. հատորի։ Հարբուտացել են նաև Հասարակական և Կենսաբանական գիտությունների բաժանմունքների գրադարանները։

Մինչև Ակադեմիայի ստեղծումը գիտության որոշ բնագավառներ մեր ոնսպորտիկայում կամ չէին զարգանում կամ էլ առաջ էին շարժվում շատ դանդաղաբայի։ Այլ վերաբերում է առաջին հերթին աստղագիտությանը, ֆիզիկային, մաթեմատիկային, մեխանիկային, էլեկտրատեխնիկային, էներգետիկային և հիդրավիկային, որոնք մեծ թափով զարգացան Ակադեմիայի մի շարք գիտա-հետազոտական հիմնարկներում, ստացված արդյունքները խոշոր նշանակություն ունեցան գիտության տվյալ բնագավառի զարգացման գործում ոչ միայն Մովսեսյան Միության մեջ, այլև մի շարք զեպրեծում ճանաչվեցին և զնահատվեցին համաշխարհային գիտության կողմից։ Ակադեմիայի հիմնադրումը խոշոր աշխատանքներ ձեռնարկվեցին մեր երկրի բնական ուսումնասիրման, անօդաչանական և օրգանական բիմիայի զարգացման, հատկապես նուրբ օրգանական սինթեզի և սիլիկատների քիմիայի բնագավառներում։ Կենսաբանական գիտությունների զարգացման համար ես պատմաներ ստեղծվեցին, զարկ տրվեց հատկապես Հայաստանի ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրությանը, բույսերի ֆիզիոլոգիայի մի շարք կարևոր խնդիրների պարզաբանմանը, ֆիզիոլոգիային, միկրոբիոլոգիային, հիդրոբիոլոգիային, բիոբիմիային և ագրոբիմիային։

Հասարակայն գիտությունների զծով մինչև Ակադեմիայի ստեղծումը մեն ունեցել ենք աշխատիս խոշոր գիտնականներ, ինչպիսիք են Մ. Արևղյանը, Է. Ահաջյանը, Է. Իսանդյանը, Ստ. Իսախանյանը, Գր. Դափանյանը և Ա. Տեր-

աւթյանը Ինչպես հայտնի է, նրանք բոլոր մասնակցներին ստացին կազմի մեջ, որի հետեանով հայագիտության զարգացումը մեծ թափ ստացավ Ակադեմիայում, Հասարակական գիտությունների հիմնարկները մեծ հաջողությունների հասան հատկապես վերջին տարիների ընթացքում. լույս բնծայվեցին հայ ժողովրդի պատմությունը, լեզվին, գրականությանը, կուլտուրային և արվեստին նվիրված մի շարք արժեքավոր մենագրություններ: Ակադեմիայի յետմահու կարևոր իրադարձություն հանդիսացավ Տնտեսագիտության, Արվեստի Ինստիտուտների և Փիլիսոփայության սեկտորի կազմակերպումը, որոնք կարևոր դեր ունեն մեր երկրում փիլիսոփայության, Արվեստի և արվեստի զարգացման գործում: 1958 թ. կազմակերպվեց նաև Արևելագիտության սեկտորը, որի առաջ ծառայում են մի շարք լուրջ ինդիքներ՝ կապված ՄԼԵՐժամբար Արևելքի ժողովուրդների պատմության, կոնստիտուցիայի, լեզվի, գրականության և այլ հարցերի հետ: 1943 թվականին, Գիտությունների ակադեմիայի կազմակերպման շրջանում Հասարակական գիտությունների բաժանմունքն ուներ միայն երկու ինստիտուտ և մեկ թանգարան: Ներկայումս բաժանմունքի կազմում կա հինգ ինստիտուտ, երկու ինքնուրույն սեկտոր և երկու թանգարան. ընդամենը 9 գիտահետազոտական հիմնարկություն: Զգալիորեն ընդլայնվել է նրա հրատարակչական գործունեությունը:

Պատմության ինստիտուտը զգալի հաջողությունների է հասել գիտահետազոտական աշխատանքների ծավալի և որակի բարձրացման, մենագրությունների և այլ կարգի հետազոտությունների հրատարակման գործում: 1958 թվականին 1943 թ. համեմատությամբ ինստիտուտի գիտ. աշխատողների թիվը ավելացել է 6 անգամ, այժմ ինստիտուտի 53 գիտ. աշխատողներից 7-ը գիտությունների ղոկտոր են, 31-ը՝ թեկնածու: 15 տարվա ընթացքում ինստիտուտի կոլեկտիվը լույս է բնծայել 77 մենագրական աշխատություն, որից 51-ը վերջին հինգ տարում: Բացի հայ ժողովրդի պատմության զբոսըրոցական 3 հատորանոց ձևակերպից, հայ ժողովրդի պատմության զպրոցական առյուսից, այստեղ լույս են բնծայվել այնպիսի արժեքավոր կապիտալ աշխատություններ, ինչպիսիք են՝ 2. Մասնաշրջանի սփռնական տեսությունը հայ ժողովրդի պատմությանը, Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի սպասարկական պայքարը թուրքական լուծարմանը դեմ», «Ռուս-հայկական հարստերությունների պատմությունից», Ա. Հովհաննիսյանի «Անդրկովկասի միացումը Ռուսաստանին և միջազգային հարաբերությունները XIX

դարի սկզբներին», Վ. Ռշտունու «Հայ հասարակական մտքի պատմությունից», Աշոտ Հովհաննիսյանի «Երվանդի հայ ազատագրական մտքի պատմություն», Ս. Երևանի «Հայ ժողովրդի պատմության զարգացման առյուսը», Մ. Աղայանի «Հնդկամերձի սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը», «Ինդուստրիան շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.», Բ. Պիտարովսկու «Ուրարտուի պատմությունը և կուլտուրան», Բ. Առաքելյանի «Քաղաքները և արևելստեղծ Հայաստանում IX—XIII դարերում», Լ. Խաչիկյանի «XV դարի հիշատակարանները և այլ կապիտալ աշխատություններ: Անհրաժեշտ է հատկապես նշել, որ մինչև Ակադեմիայի հիմնադրումը բոտ էությունը շատ բիշ է ուսումնասիրվել հայ ժողովրդի պատմության սովետական շրջանը: Միայն Պատմության ինստիտուտում Սովետական շրջանի պատմության հատուկ սեկտոր ստեղծվելուց հետո լուրջ աշխատանքներ ծավալվեցին սովետական հասարակարգի պատմության ուսումնասիրման գծով: Այստեղ վերջին 2 տարում հրատարակվել են 11 մենագրություն, այդ թվում «Ռուս-վազմեր Սովետական Հայաստանի պատմությանը 2 պրակներ, «ՄԼԵՐ Հնդկամերձի զրոշի ներքո», «Սովետական Հայաստանի պատմությունը ժողովրդական տնտեսության վերականգնման մասնակաշրջանում», «Հնդկամերձի սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիան և սովետական կարգերի հազմանակը Հայաստանում» և այլ աշխատություններ: Ներկայումս ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքներն ընթանում են հայ ժողովրդի բազմահատոր պատմության և Հայաստանի պատմական առյուսի նախապատրաստման ուղղությամբ:

Համաժողովնական, նույնիսկ համաշխարհային նշանակություն ունեն Հայաստանում կատարվող հնագիտական պեղումները: Պեղումներ են կատարվել տյնայիս կարևոր հնագիտական վայրերում, ինչպիսիք են Կարմիր-բուրք, Գասնիկ, Շենգավիթք, Արինքերդը և այլն: Լույս են բնծայվել Կարմիր-բուրքի (Բ. Պիտարովսկի), Գասնիկի (Բ. Առաքելյան) դիտական արշավախմբերի հաշվետվությունները, ինչպես և «Քալոյիթի» Հայաստանում մենագրությունը (Ս. Կարպարյան) և այլ աշխատություններ:

Հայկական ՄՄԹ ԳԱ Մ. Արեղյանի անվան Դրակամության ինստիտուտը բացի հայ գրականության պատմության գոսագրքերից, հրատարակել է բազմաթիվ մենագրություններ՝ նվիրված հայ գրականության պատմությանը: Ինստիտուտն իր աշխատանքներով նպաստել է սովետահայ գրականության զարգացմանը, նրա առջև կանդակած տեսական ինդիքների լուծմանը:

Վերջին 5 տարում հրատարակված 77 աշխատություններից 30-ը նվիրված են սովետական գրականությանը: 1957 թվականին ինստիտուտը հրատարակեց «Սովետական գրականության տարեգործությունը», որը իր տեսակի մեջ առաջինն է ողջ Միություն մեջ և լավ բնօրինակություն գտավ ինչպես Հայաստանում, այնպես էլ նրանից դուրս: 1954 թ. սկսած ինստիտուտի գիտամասնական սերիայով հրատարակվել է 20 անուն գիրք՝ նվիրված հայ ահանավոր գրողների ստեղծագործությունը, ինչպես և սովետահայ գրականության առանձին հարցերին: Թատրոն մենագրություններ են լույս տեսել նվիրված Խ. Արթուրյանի, Ռ. Պատկանյանի, Պ. Պոռյանի, Ա. Շիրվանզադեի կյանքին և ստեղծագործություններին: Պատրաստվել և հայերեն ու ռուսերեն լեզուներով հրատարակվել է հայ մեծանուն գիտնական Բ. Արևելյանի «Հայ հին գրականության պատմությունը մեծարժեք ուսումնասիրության երկհատորյակը, Ինստիտուտը հրատարակել է նաև Հ. Օրբելու «Հայկական հեքստոկան Լպտոր», Ա. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության», ուրիշ մենագրություններից՝ «Հայկական մամուլը և ցարական ջնհգուրան» մեծածավալ աշխատանքները: Զգալի ուշադրություն է դարձվել ժողովրդական բանահյուսության ուսումնասիրման և հայ կրթուկի գրողների ժառանգության հավաքման ու նրանց գիտական հրատարակության գրաս: Ա. Կարինյանի «Ակնարկներ ժողովրդի լիակատար ժողովածուի» 8 հատորյակը, Մ. Նալբանդյանի «Սերիերի լիակատար ժողովածուի» 4 հատորը, Հովհ. Քումանյանի «Սերիերի» 5 հատորը, Գ. Սունգուկյանի «Սերիերի» 3 հատորը և այլն: Ավարտվել է հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հ. Հակոբյանի «Սերիերի» 4 հատորյակի հրատարակումը, պատրաստվում է Ս. Ջարնեցի «Սերիերի լիակատար ժողովածուի» 4 հատորյակը: Ինստիտուտում զգալի աշխատանք է կատարվել հայ-ռուսական, հայ-ագրբեջանական, հայ-վրացական գրական կապերի բացահայտման ուղղությամբ: այդ գծով հրատարակվել են մի շարք արժեքավոր աշխատություններ (Գ. Հովհան, Ն. Քումանյան, Բ. Շահինյան և այլն): Ներկայումս ինստիտուտը նախաձեռնել է «Հայ նոր գրականության պատմության» բազմահատոր գիտական հրատարակությանը: Զգալի աշխատանք է տարվել հայ գրականության պատմության զարգացման ձեռնարկի ստեղծման վրա, որը երբ հատրով չորս հրատարակություն է ունեցել: լույս են տեսել Ստ. Շահունյանը, Ն. Ջարնեցը, Բաֆֆին գրականության մասին ժողովածուները:

Ընդլի ինստիտուտում հատկապես պետք է նշել այն խոշոր աշխատանքը, որ կատարվել է բարրատագիտության գծով: Այս տարիների ընթացքում ինստիտուտը նախապատրաստել է լույս տեսնելու «Սովետական գրականության ունի լեզվաշինարարության տեսակետից: Որոշ նախապատրաստական աշխատանքներ են տարվել հայոց լեզվի բացատրական բառարան ստեղծելու ուղղությամբ: Նոր կարևոր բայ է կատարվում հայ բարրատների լեզվաբանական բարեբեկ և առյուս կազմելու ուղղությամբ, արդեն կազմված են բարրատների ձևաբանական և բազմաձևական համակարգի, Բարատյան և Գերբիմի բարրատների գիտական բարեբեկները: Ինստիտուտը հրատարակել է 23 խոշոր մենագրություն, ուղղվում է Անտոյանի «Հայերենի լիակատար քերականություն 562 լեզուների համեմատությամբ», Ներածությունը և 3 հատորները, «Արբիագի բարբառ», «Համերենի բարբառ», Գր. Ղալանջյանի «Պատմա-լեզվաբանական աշխատություններ», «Հայասան հայերի բնորոշներ», է. Աղայանի «ՄԱԳրու բարբառ», Ա. Ղարիբյանի «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ», Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց Անարսիական նշանակությունը», Ս. Ղազարյանի «Ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա զարգացման մեջ», Ա. Մուրվալյանի «Հայոց լեզվի բառային կազմը», Վ. Առաքելյանի «Արբի և հայերենի հնչյունաբանությունը», «Հուլիաների և հուլիական կապակցությունների կիրառությունները արդի հայերենում», Ա. Աբրահամյանի «Արդի հայերենի դերանունները և այլ մենագրություններ» նվիրված լեզվաբանության տարբեր հարցերին: Ինստիտուտում այժմ մեծ աշխատանք է տարվում հայերենի բարբառների կազմման ուղղությամբ: 10 միլիոն բարբառ բաղկացած բարբառների ստեղծումը կհանդիսանա մեծ իրադարձություն հայագիտության ասպարեզում, նա կհեշտօցնի հայոց լեզվի ուսումնասիրության գործը և անսպառ սղբչյուր կհանդիսանա բառարանագրության և բնօրինակային հայագիտության զարգացման համար:

Այժմ լեզվի ինստիտուտը աշխատանք է ծավալել ժամանակակից հայերենի գիտական քերականության մշակման և հայոց լեզվի ակադեմիական բառարան (չուրջ 20 հատոր) կազմելու համար:

Իհնչև Ակադեմիայի հիմնադրումը ռեսպուբլիկայում փաստորեն գոյություն չունեին տնտեսագիտական գիտահետազոտական հիմնարկներ: Ակադեմիայի սիստեմում 1943 թ. ստեղծվեց Տնտեսագիտական սեկտորը, որը 1955 թ.

վերածվեց ինստիտուտի Այստեղ զգալի աշխատանք է կատարվել սոցիալիզմի քաղաքատնտեսության, սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության, Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության մի շարք կարևոր պրոբլեմներ առաջ քաշելու և գլանր գիտականորեն հիմնավորելու, ինչպես և արտադրության մեջ ներդրելու ուղղությամբ, Ինստիտուտում մշակվում են նաև սոցիալիզմի քաղաքատնտեսության մի շարք տեսական ու գործնական մեծ նշանակություն ունեցող հարցեր: Արժեքավոր աշխատանքներ են կատարվել «Մեան-Հրազդան» կառկալի իրագործման կոմպլեքսային պրոբլեմի, Արզնի-Շամիրամ սուդան սիստեմի, Ախտայի չինարիմիական կոմբինատի, գունավոր մետալուրգիայի կարևոր հարցերի, սոցիալիզմի գործարանի կազմակերպման էնկլաիվության և երկաթուղային տրանսպորտի դարգացման հեռանկարների կոնոմիկայի հիմնադրման և այլ կարևոր հարցերի մշակման ուղղությամբ: Ռեսպուբլիկայի Մինիստրների Սովետի, Պետպլանի և Սեանի կոմիտեի հանձնարարությամբ 1957—58 թվականների ընթացքում ինստիտուտում ուսումնասիրվեց Հայաստանում 12 նոր խոշոր արդյունաբերական մետալուրգիայի ստեղծելու հարցը, որը հանձնվեց Պետպլանին Բացի այդ, ինստիտուտը մշակեց և Պետական պլանային հանձնաժողովին ներկայացրեց «Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. սխեման», որը օգտագործվեց ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարային պլանները կազմելու նամար: Երկր են առանձին արժեքավոր մեկապրոբլեմներ՝ «Մոլոտոսեայի կարգի հաղթանակը Հայկական ՍՍՌ-ում» (Ա. Մարտիյան), «Հայ տնտեսագիտական մտքի զարգացումը XIX դարում» (Ս. Զուրարյան), «Արեւելյան Հայաստանի տնտեսական զարգացումը XIX դարում» (Մ. Աղոնց) և այլն: Կարևոր ուսումնասիրություններ են կատարվել՝ նվիրված Հայկական ՍՍՌ կոլտնտեսությունների համախուռն ու ապրանքային արտադրանքի, առանձին տնտեսական շրջանների կոմպլեքսային զարգացման, մեքդրոզարային տնտեսության կազմակերպման ու կոնոմիկայի, ռեսպուբլիկայի արդյունաբերության տարբեր ճյուղերի կազմակերպման և կոնոմիկայի հարցերին: Այդ խնդիրների վերաբերյալ լույս են բնծայվել մի շարք աշխատություններ:

1948 թվականին Ակադեմիայի սիստեմում հիմնադրվեց Արվեստի սեկտորը, որը 1958 թ. վերածվեց ինստիտուտի Անցած 10 տարվա ընթացքում այստեղ գիտա-հետազոտական աշ-

խատանք է կատարվել հայ երաժշտության, ճարտարագետության, լիստրոնի, պարավեստի և կերպարվեստի պատմության ու տեսության հարցերի ուսումնասիրման, ինչպես նաև հայ ժողովրդական երաժշտության նմուշների հավաքման ու ձայնագրման, հայ կլասիկ կոմպոզիտորների երկերի ակադեմիական հրատարակության նախապատրաստման, ճարտարագետության ու կերպարվեստի հուշարձանների ուսումնասիրության և պարերի նմուշների գրանցման ուղղությամբ: Ինստիտուտի աշխատանքները ոչ միայն լուսաբանում են հայ քաղմադարյան արվեստի պատմությունը, այլև օգնում են լուծելու ճարտարագետության և արվեստի այլ բնագավառների առաջ կանգնած հրատուպ խնդիրները: 10 տարվա ընթացքում ինստիտուտը հրատարակել է 15 անույ գիրք: Հատկապես անհրաժեշտ է նշել Ռ. Զարյանի «Մոլոտոսեյը», Կ. Տիգրանովի «Հայկական երաժշտական թատրոնը», Ռ. Դրամբյանի «Նիդիլ Քաղնույան», Ա. Սահինյանի «Քասապի քաղիլիկայի ճարտարագետությունը», Ս. Լիսիցյանի «Հայ ժողովրդի հիմնավորց պարերն ու թատերական ներկայացումները», Ս. Մեացականյանի «Հայկական գալիթների ճարտարագետությունը», Վ. Հարությունյանի և Կ. Հովհաննիսյանի «Սովետական Հայաստանի ճարտարագետությունը» և այլ աշխատություններ: Հրատարակված են նաև Ա. Սպեղիարյանի երկերի 6 հատորները: Կոմիտասի երկերի առաջին հատորը:

Այժմ այստեղ աշխատանք է տարվում նաև կիրառական արվեստի մի քանի ճյուղերի գծով: որի նպատակն է համապատասխան նմուշներ մշակել դրանք արտադրության մեջ ներդրելու համար:

Փիլիսոփայության սեկտորը արժեքավոր աշխատանք է կատարել հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության բնագավառում՝ հրատարակելով հայ փիլիսոփայական մտքի հուշարձանների տերտերը: Սեկտորը միաժամանակ զբաղվել է նաև տեսական հարցերի ուսումնասիրմամբ՝ կազմված սոցիալիստական շինարարության պրակտիկայի ընդհանրացման հետ: Այստեղ հրատարակվել է 21 մեկապրոբլեմ, որից 17-ը 1954 թվականից հետո, 6-ը գտնվում են տպագրության պրոցեսում:

Պատմական թանգարանը, որի գիտական կոլեկտիվը 1943 թվականի համեմատությամբ աճել է 3 անգամ, դարձել է Սովետական Միության խոշոր թանգարաններից մեկը: Թանգարանն ամփոփում է հայ ժողովրդի կուլտուրայի հուշարձանների 90 զգաք առարկա, որոնցից 52.871-ը ձևը են բերվել 1943 թ. հետո: Թանգարանը ոչ միայն հարստացրել է իր ֆոնդերը,

կազմակերպել նոր գիտական էքսպոզիցիաներ, այլև ծավալել է լայն գիտա-հետազոտական աշխատանքը։ Այժմ այստեղ լուրջ ուսումնասիրություններ են կատարվում ազգագրության և հնադրամաշինության ուղղությամբ, Դժինում և Սևանի ափին կատարված պեղումները հարուստ նյութ են տալիս մեր ժողովրդի հնադրույն և միջին դարերի պատմության հարցերը լուսաբանելու համար։ Քանգարանը հրատարակել է նաև մի շարք հետազոտական աշխատանքներ, մենագրություններ, այդ թվում Ք. Քորամանյանի աշխատությունների ժողովածուն, Կ. Ասֆազարյանի «Ե՛վին քաղաքը և նրա պեղումները», «Շուճահանավանքը և նրա արձանագրությունները», «Սանահինի վանքը և նրա արձանագրությունները»։

1954 թվականից սկսած Գրականության և արվեստի թանգարանը գործունեություն ծավալեց, որպես նոր ինքնուրույն միավոր, թանգարանի աշխատակիցներն իրենց առջև նպատակ դրին կորստից փրկել այն նյութերը, որոնք հայ կուլտուրայի պատմության համար շատ մեծ արժեքներ են ներկայացնում։ Նրանց շտաբը կազմավորվեց Մովսեսյան Միության, և թե՛ արտասահմանյան երկրների տարրեր կազմակերպություններից ու մասնավոր անձերից թանգարանը բերվեցին մեծ թվով արժեքավոր արխիվներ։ Այժմ լրիվ մշակվել են Գ. Սահակյանի, Մ. Նալբանդյանի, Մ. Էմինի, Հ. Հովհաննիսյանի, Մուրացանի, Մեղենցի, Շ. Կուրղինյանի, Ս. Չարենցի, Կոմիտասի, Կարա-Մուրզայի, Հ. Արևելյանի, Պ. Աղամյանի, Ա. Սահակյանի և այլ խոշոր գործիչների արխիվները։ Թանգարանը վերջին 10 տարում կազմակերպել է 12 խոշոր ցուցահանդես, այդ թվում Հայ թատրոնի պատմության մշտական ցուցահանդեսը, որը ՄԱԹ Կուլտուրայի միջնորդության որոշմամբ տեղափոխվեց Մոսկվա։

Ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների բնագավառում առաջիկ աչքի ընկնող հաջողություններ է ունեցել Բյուրականի աստղագիտաբանը, ակադեմիկոս Ա. Հ. Համբարձումյանի ղեկավարությամբ։ Բյուրականի աստղագիտաբանում ստացվել են այնպիսի արդյունքներ, որոնք յարձր գնահատական են արժանացել համաշխարհային գիտության կողմից և նոր ուղղություն բացել աստղագիտության ասպարեզում։ Այսպես, օրինակ՝ 1945—46 թթ. Աստղագիտաբանի կողմից առաջարկվեց մի նոր տեսություն՝ աստղերի բաշխման մեջ գիտվող ֆիզիկոսացիաների տեսությունը, որով նոր ուղղություն ստեղծվեց աստղագիտության մեջ։ Այդպիսին հանդիսացավ նաև աստղափոխությունների հայտնագործությունը և աստղերի առաջնական պարբերմի նոր դրվածքը, որոնք արդ-

յունք էին 1947—50 թթ. տարված գիտա-հետազոտական աշխատանքների։ Աստղագիտաբանի կողմից 1951 թ. տրվեց աստղակույտների նոր դասակարգում, որը լայն կիրառություն գտավ աստղագիտության մեջ։ 1952—53 թթ. հայտնագործվեց կրաքուճե միզամածության ճառագայթման բևեռացումը, իսկ 1954 թ. հաստատվեց անբղջատ առարման և աստղի էներգիայի աղբյուրների միջև եղած կապը։ 1956—57 թթ. Բյուրականի աստղագիտաբանի գիտա-հետազոտական աշխատանքների պատվեցին նոր հաջողությամբ։ Դա կապույտ դաշակտիկաների հայտնաբերումն ու ուսումնասիրությունն է, որը նույնպես լայն արձագանք գտավ աստղագետների շրջանում։ Բյուրականի աստղագիտաբանը այժմ հանդիսանում է աշխարհի խոշոր կենտրոններից մեկը աստղաֆիզիկայի բնագավառում։

Ֆիզիկայի ինստիտուտը ակադեմիկոս Ալեխանյանի ղեկավարությամբ հիմնականում զբաղվել է կոսմիկական ճառագայթների ուսումնասիրությամբ։ Այդ նպատակով կառուցվել է Արագածի գիտական կայանը 3200 մ. բարձրության վրա, որն այժմ հանդիսանում է նմանօրինակ ամենախոշոր կայաններից մեկը աշխարհում։ Այդ կայանում ստացվել են կարևոր տվյալներ կոսմիկական ճառագայթների բնույթի և նրանց կազմի մեջ մտնող տարրական մասնիկների ֆիզիկայի վերաբերյալ։

Մաթեմատիկայի և մեխանիկայի գծով, ակադեմիկոսներ Ա. Շահինյանի, Ն. Հարությունյանի և Մ. Զրբաշյանի ջանքերով ստեղծվել են ուժեղ գիտական կոլեկտիվներ։ Մաթեմատիկայի բնագավառում մոտավորությունների տեսության ուղղությամբ ստացվել են սկզբունքային նշանակություն ունեցող արդյունքներ։

Մեխանիկայի ասպարեզում կատարված աշխատանքներն ընթացել են երկու յմնական ուղղություններով՝ ստաձգականության տեսության և սողրի տեսության։ Մշակվել և իր զարգացումն է ստացել սողրի մի նոր բնդանուր տեսություն, որը նկատի ունի նյութի սծերացման հատկությունները և օգնում է մի շարք կարևոր խնդիրներ լուծելու։

Ակադեմիայի սրտիսում Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի Հաշվողական տեխնիկայի լաբորատորիայի հիման վրա 1957 թ. ստեղծվեց ԳԽ Հաշվողական կենտրոնը։ Այդ կենտրոնը ակադեմիկոս Մարգարյանի ղեկավարությամբ արդեն գործի է դրել հաշվիչ մեքենան։ Հետագայում այդ կենտրոնը կարևոր դեր պետք է խաղա մեր նպաստաբերիչ կայան հաշվողական տեխնիկայի զարգացման և ավելի կատար-

յալ հաշվիչ մեքենաների օգտագործման ու ստեղծման ասպարեզում:

Տեխնիկական գիտությունների բաժանմունքի գծով նշանակալից է Երկրաբանության ինստիտուտի գործունեությունը: Այդ բնագավառում կարևոր է նշել ԳԱ օկուպեմիկոսների Կ. Ն. Պաֆենհոլցի, Ի. Գ. Մաղարյանի և Ս. Ս. Մկրտչյանի վաստակը: Հայաստանի Երկրաբանության գծով հրատարակվել են մի շարք արժևորվող բարձրակարգ Երկրաբանական ինստիտուտի շանրերով հնարավորություն ստեղծվեց հետախուզական աշխատանքներ կազմակերպել Հայաստանի մի շարք շրջաններում նավթի և գազի որոնման համար: Կարևոր արդյունքներ են ստացվել Հայաստանի մագմատիկ Երկրաբանության տարբեր հարցերի ուսումնասիրման բնագավառում: Այդ ուղղությամբ աշխատանքներն ավելի կիրառական մասսպեկտրոմետրիկ լաբորատորիայի ստեղծմամբ, որին ձեռնարկել է ինստիտուտը: Արժանի են հիշատակության նաև օգտակար հանածոների, նրանց տեղաբաշխման օրինաչափությունների հայտնաբերման ուղղությամբ կատարված աշխատանքները: Արժեքավոր մենագրություններ են «Հայաստանի մետալոգենիան» (Հ. Գ. Մաղարյան), «Զանդեզորի հանքային շրջանը» (Ս. Ս. Մկրտչյան), «Հայաստանի Երկաթի հանքավայրերը» (Է. Ա. Խաչատրյան) և այլն: Հաջողությունների շարքին պետք է գտնել նաև հանրային ջրերի ուսումնասիրությունը, որոնցով հարուստ է Հայաստանը: Երկրաբանության ինստիտուտի սիստեմում գործում է Բնաճող մեխանիկայի լաբորատորիան, որն իր սարքավորումներով Սովետական Միության առաջնակարգ լաբորատորիաներից մեկն է և լուծում է մի շարք գործնական և տեսական նշանակություն ունեցող հարցեր:

Էներգետիկայի և հիդրավիկայի բնագավառում կարևոր աշխատանքներ են կատարվել ռևոլյուցիոնար ջրային և էներգիայի այլ աղբյուրների հայտնաբերման, նրանց համատեղ և տնտեսապես օգտագործման, հիդրոէլեկտրակայանների աշխատանքի ղանազան ռեժիմների ու նրանց անցման պրոցեսների ուսումնասիրման և ձևավորման ռեժիմների օրոշման ուղղությամբ: Զգալի արդյունքներ են ստացվել նաև հիդրոտեխնիկական կառուցվածքների և ջրատարների մոդելացման, նրանց հիդրավիկական ռեժիմների հարցերի, ինչպես նաև Մեանու լճի հիդրոմետեորոլոգիական ռեժիմի ուսումնասիրության, նրա ջրերի դարավոր պաշարների ճիշտ օգտագործման և մակարդակի իրենցման հետագա գաղափարման հարցերի պարզաբանման գծով:

Քիմիայի ինստիտուտում մինչև 1957 թ. հետազոտություններ են կատարվել սինթետիկ սինթեզի և օրգանական քիմիայի տարբեր բնագավառներում: Արժեքավոր արդյունքներ են ստացվել նեֆելինային սինթետիկ մշակման հարցում: Ուղիներ են մշակվել նեֆելինային սինթետիկից ստանալու ոչ միայն կավահող, այլև ցեմենտ, նատրիումի և կալցիումի մետասինթետիկ, քիմիապես մաքուր սինթետիկ օրթոֆոսֆատ և այլն (Մ. Մանվելյան):

Օրգանական քիմիայի գծով մշակվել են մեթոդներ բուսական հիդրոքսիմետիկ ածխաջրածինների սինթեզի համար, ինչպես նաև նոր եղանակներ՝ Երրորդային ամինների (Ա. Ռաբաչյան), քլորածխաջրածինների դեհիդրոքլորացման և դինեյլին միացությունների ստացման համար: Գիվինիլացետիլենի հալոգենային ածանցյալների բաղադրյալ սինթեզված են նոր մոնոմերներ, պոլիմերներ և սուպերմերային միացություններ, որոնք հանդիսանում են հետազոտության նյութեր սինթետիկ թուղանթաներում ու կառուցվածքներ ստանալու համար: Մշակված է նոր, բնագիտական ազդեցիկ նյութային ամինուպիրոնների և պլիմերի գիրոլոգների սինթեզի համար:

Էլեկտրատեխնիկայի լաբորատորիայում մշակվել են մի շարք հարցեր՝ կապված բարձրազույգ մեկուսիչների արտագործման և տեխնոլոգիայի, էլեկտրատեխնիկայի օգտագործման, անասնաբուժական ֆերմաների էլեկտրոֆիկացման հետ: Առավել կարևոր են այն հետազոտությունների արդյունքները, որոնք կապված են բարձր լեռնային պայմաններում էլեկտրական պսակի երևույթի հետ: Մշակված են տեխնիկական տարբեր բարձրությունների վրա միական հաղորդչաբերի դեպքում պսակի կորուստները հետազոտելու համար: Բարձր լեռնային հետազոտությունների հիման վրա տրվել է պսակի հետեանրով առաջացող էներգիայի և հղորության կորուստների հաշվարկման մեթոդը:

Շինանյութերի և կառուցվածքի ինստիտուտը, որը մինչև 1956 թ. գտնվում էր Հայկական ՄՍՍ ԳԱ սիստեմում, ուսումնասիրել է բնական քարի հատկությունները, նրա հանույթի և մշակման հետ կապված մի շարք հարցեր: Ինստիտուտը նպատակահամար ուղիներ է նշել քարի մշակման համար: Այստեղ յուրը հետազոտություններ են կատարվել կապակցությունների և բետոնի հատկությունների ուսումնասիրության բնագավառում: Այդ հարցերում ինստիտուտը սիստեմատիկ զննություն է ցույց տալիս շինարարությանը: Հետազոտությունների արդյունքները ամփոփված են մի շարք մենագրություններում, բրոշյուրներում ու հոդվածներում:

Քիթոլդիական գլխորդյունները բաժանմունքը զգալի հաջողությունների է հասել նուրբ օրդանական սինթեզի ուղղությամբ, Վե ակադեմիկոս Ա. Լ. Մեդոյանի ղեկավարությամբ մշակվել են նոր ուղիներ բիոլոգիական ակտիվ պրեպարատների սինթեզի համար: Հայտնաբերված են արժեքավոր փաստեր, որոնք լուսաբանում են օրդանական նյութի կառուցվածքի և նրա բիոլոգիական ազդեցության միջև կապը: Հայրենական և արտասահմանյան մասնագետների կողմից առանձին ուղղություններում արժանաշուն ինստիտուտի կողմից հրատարակված հետազոտչիկի միացությունների սինթեզին նվիրված պարբերական պրակները:

Ղևրջին տարվա ընթացքում ինստիտուտը հետաքրքիր աշխատանքներ է ծավալել մի շարք պրեպարատների սինթեզման ուղղությամբ, որոնք փորձարկվում են շարքակ ուսուցիչները բուժման համար:

Բուսաբանության գծով առավել աչքի ընկնող աշխատանքներ են կատարվել Հայաստանի բույսերի սինտեզատիկայի ուղղությամբ, որի արդյունքն է հանդիսացել «Հայաստանի ֆլորայի բազմահատոր աշխատության նախապատրաստումը և հրատարակումը: Առ այսօր լույս են բնծայված այդ դրքի 3 հատորները և տպագրության է պատրաստված 4-րդ հատորը: Թեստապրոլիպայի բուսական ծածկոցի հետազոտության գործում կարևոր նվաճում է Հայաստանի անտառային և խոտային բուսական խմբավորումների տարածման, ծագման և զարգացման օրինաչափությունների պարզաբանումը: Լայնորեն ծավալվել են բույսերի փոշեհատիկների մորֆոլոգիական ուսումնասիրությունները, Բազմակողմանի ուսումնասիրվել են տեղական խոտաբույսերի, ղեկորատիվ բույսերի բիոլոգիան, էկոլոգիան և մորֆոլոգիան:

Ձգալի գիտական նվաճումներ են ձեռք բերված բույսերի ֆիզիոլոգիայի և անատոմիայի սպարերգում: Խորապես և բազմակողմանիորեն հետազոտված են միամյա, երկամյա և բազմամյա բույսերի անհատական զարգացման ֆիզիոլոգիական առանձնահատկություններն ու ցուցանիշները (Վ. Ղազարյան):

Սենդանաբանական ինստիտուտը աչքի ընկնող աշխատանքներ է տարել Հայաստանի կենդանական աշխարհի տեսակային կազմի, նրա ծագման, տարածման, էկոլոգիական և էվոլյուցիոն մորֆոլոգիայի հարցերի լուսաբանման ուղղությամբ: Տպագրվել են մի շարք մենագրական աշխատություններ՝ նվիրված Հայաստանի ֆաունային: Հատուկ ուշադրություն է դարձված վնասատու միջատների ուսումնասիրությանը: Ինստիտուտն աշխատանք է ծավալել Հայաստանի

ֆաունան օգտակար կենդանիներով հարստացնելու համար և դրական արդյունքի է հասել ուսուցիչական բժավոր եղջերուի ակլիմատիզացիայի գործում: 1958 թ. ինստիտուտում ստեղծվել է ակլիմատիզացիայի և հիբրիդիզացիայի սեկտոր:

Ղևրջին տարիների ընթացքում զգալիորեն աճել է Ֆիզիոլոգիայի ինստիտուտը, որը ունեցել է մի շարք հաջողություններ կապված ֆունկցիաների կոմպենսատոր հարմարվելուության հետ՝ կենտրոնական ներվային սխեման, հատկապես ողնուղղի ուտերի վնասվածքների դեպքում: Այդ հարցն ուսումնասիրվել է էվոլյուցիոն ասպեկտով զարգացման տարբեր աստիճանի վրա կանգնած, տարբեր հասակի կենդանիների վրա, և հայտնաբերվել են մի շարք օրինաչափություններ՝ կապված վնասվածքի շտի, նրա տեղակայման հետ: Ինչպես ստատիկ օրդաններ, նույնպես և մարսողական տրակտի վերաբերյալ ստացված արդյունքները գործնական նշանակություն ունեն բժշկության մեջ:

Մինչև 1958 թվականը Բիոքիմիայի սեկտորը դառնում էր Ֆիզիոլոգիայի ինստիտուտում, այժմ նա առանձնացել է որպես առանձին հիմնարկ: Այդ սեկտորում կարևոր տվյալներ են ստացվել նյութափոխանակության ներվային կանոնավորման, ուղեղի ֆունկցիոնալ բիոքիմիայի և էմբրիոքիմիայի գծով:

Միկրոբիոլոգիայի սեկտորի կոլեկտիվը ԳԱ Խղթակից առգամ Հ. Փանոսյանի գլխավորությամբ, զբաղվել է Տողի միկրոբիոլոգիայի տարբեր հարցերի պարզաբանմամբ: Ուսումնասիրվել են Հայաստանի տարբեր կլիմայական պայմաններում գոնվող առանձին հոգատիպերում բնակություն հաստատող ազոտ ֆիքսող ազոտաբակտերիաների և պուլսաբակտերիաների բիոլոգիական առանձնահատկությունները, մեկուսացվել են նրանց առանձին էկոտիպերը, որոնք օգտագործվելով ազոտաբակտերիան և նիտրոգենի արտադրության մեջ, հետադառնում ցույց են տվել բարձր էֆեկտիվություն: Լուրջ աշխատանքներ են սկսվել հակաբիոտիկների ուղղությամբ: Մշակվել են մի շարք միջոցառումներ բույսերի բակտերիալ հիվանդությունների դեմ: Սննդային արդյունաբերության մեջ ներդրվել են խմորանկերի արժեքավոր տեսակները:

Ազոտիմիայի լաբորատորիան Ակադեմիայի սխեմայում կազմակերպվել է 1947 թվականին: Նրա գիտահետազոտական գործունեությունը ԳԱ ակադեմիկոս Գ. Ս. Դավթյանի ղեկավարությամբ, ուղղվել է Հայաստանի Տողերի բերրությունը բիմիացման ճանապարհով բարձրացնելու տեսական և գործնական խնդիրների ուսում-



նասիրմանը: Ուսումնասիրվել է մշակվել են Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում հացահատիկային կուլտուրաների պարտազման հարցերը: Այդ հետազոտությունների հիման վրա կազմվել են աշնանացան և գարնանացան ջորենների պարարտազման ագրոցուցումներ, որոնք հանձնվել են Գյուղատնտեսության մինիստրությանը:

1957 թվականից Ազրբեյձանի լաբորատորիայի համարյա ողջ կոլեկտիվը զբաղվում է Հայաստանի գլխավոր հողատիրերի ազրբեյձանական քնննազրման հետազոտություններով: Այդ ուսումնասիրությունների արդյունքները հնարավորություն կտան պարզելու հողի բերրության մի շարք չլուծված հարցեր: Ուշագրության արժանի են Ազրբեյձանի լաբորատորիայի հաջող փորձերը առանց հող, արհեստական սննդանուսության միջոցով գյուղատնտեսական բույսեր աճեցնելու ուղղությամբ և մի շարք արտադրական փորձերը տարբեր կուլտեստություններում:

Սևանի հիդրոբիոլոգիական կայանը հետազոտել է Սևանա լճի բուսական և կենդանական աշխարհը, նրա փոփոխությունները լճի մակարդակի իջեցման պայմաններում: Արժեքավոր են Սևանի կայանի՝ ձկների արհեստական բազմացման և աճեցման համար կատարած աշխատանքները: Կայանը միջոցառումներ մշակեց մատոզը ձկների բազմացման և աճեցման համար, որով հնարավոր դարձավ պահպանել ձրկների պաշարները լճի իջեցման պայմաններում:

1958 թվականին Բիոլոգիական բաժանմունքում կազմակերպվեց Ռադիոբիոլոգիայի սեկտոր:

Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքը Գիտությունների ակադեմիայի կազմում գոյություն է ունեցել 1943—1956 թթ., նրա հիմնարկներում աշխատանքներ են կատարվել գյուղատնտեսության մի շարք բնագավառներում:

Նրկրագործության ուղղությամբ կարևոր է բույսերի ձևազոյացման, մշակության և այլ հարցերի հետազոտությունը: Հանգուցյալ Մ. Գ. Խումանյանը և նրա աշխատակիցները լուրջ ուշադրություն են դարձրել ձևազոյացման գյուղատնտեսական բույսերի ձևազոյացման ուղղությամբ՝ թև՝ բնական պայմաններում, և թև՝ փորձնական հոգումստեղծում:

Հարկ են համարում նշել Հայաստանի մոլախոտերի ուսումնասիրության և նրանց դեմ պայքարելու պրոբլեմը, որով զբաղվել է Հույկական ՄՍՌ ԳԱ ակադեմիկոս Գ. Խ. Աղաբաբյանը: Ստացված արդյունքները հրատարակված են «Հայաստանի մոլախոտային բույսերը և պայքարը նրանց դեմ» մենագրության մեջ:

Կարևոր է հիշատակել ակադեմիկոս Ա. Զ. Քամաճյանի հետազոտությունների արդյունքները, որոնք ամփոփված են նրա «Հայաստանի խոշոր եղջերավոր անասունների անցյալում և ներկայումս» աշխատության մեջ:

Հայաստանի Գիտությունների ակադեմիայում տարիների ընթացքում արժեքավոր հետազոտություններ են կատարվել խաղողագործության, պտղաբուծության և գինեգործության ուղղությամբ:

Հետաքրքրական աշխատանքներ են տարվել բույսերի բնվճարման բիոլոգիայի բնագավառում (ԳԱ ակադեմիկոս Գ. Հ. Բարաչանյան) և ցորենի նոր սևակներ ստեղծելու ուղղությամբ (ԳԱ ակադեմիկոս Վ. Հ. Գուլբանյան):



Գիտությունների ակադեմիան իր գոյության 15 տարիների ընթացքում Հայաստանի Կոմունիստական պարտիայի և կոոպարության հոգատարության ունեցել է մեծ հաջողություններ: Այդ մասին է վկայում այն փաստը, որ Ակադեմիայի գիտական աշխատողները այդ ժամանակամիջոցում տպագրել են շուրջ 560 մենագրական աշխատանքներ և 1000 գիտական հոդվածներ: Եթե 1944 թ. հրատարակվել է 44 անուն գիրք, 120 մամուլ ծավալով, ապա 1957 թ.՝ 131 անուն գիրք, 1597 մամուլ ծավալով, 1958 թ. միայն տասն ամսվա ընթացքում 119 անուն գիրք, 1400 մամուլ ծավալով, Այժմ Ակադեմիան հրատարակում է, բացի Զեկույցներից, 6 Տեղեկագիր՝ հասարակական, ֆիզիկո-մաթեմատիկական, տեխնիկական, կենսաբանական, երկրաբանական և աշխարհագրական, բիոսական գիտությունների գծով: 1958 թ. սկսվեց հրատարակվել «Պատմա-բանասիրական հանդեսը», որը մեծ արձագանք գտավ ոչ միայն մեր Խիտությունում, այլև արտասահմանում՝ սոյուսբանդայության մեջ:

Վերջին տարիների ընթացքում Ակադեմիան կազմակերպել է համամիութենական խորհրդակցություններ՝ նվիրված մի շարք ակտուալ պրոբլեմներին:

Տարեցտարի ընդլայնվում է ամբաստանվում են Հայաստանի Գիտությունների ակադեմիայի գիտական կազմերը արտասահմանյան գիտական կենտրոնների հետ: Բավական է նշել, որ Կենտրոնական գրադարանը գրափոխանակություն է կատարում մոտ 20 արտասահմանյան երկրների՝ ավելի քան 160 գիտական հիմնարկների ու գրադարանների հետ: Միայն 1957 թվականի ընթացքում Ակադեմիայի գրադարանն արտասահմանյան երկրներ է ուղարկել 5310 և ար-

տասանամանից ստացել է 1470 անուն գիրք ու հանդես

Սովետական Հայաստանի աչքի բնկեող մի շարք գիտնականների աշխատանքներ թուրգմանվել են արտասահմանյան երկրներում, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի կողմից խմբագրված «Տեսական աստրոֆիզիկա» մոդովածուն, որի երկու չորսր դրված է Վ. Հ. Համբարձումյանի կողմից, հրատարակվել է Բևալի-նում:

Հայկական ՍՍԻ ԳԱ ակադեմիկոս Ն. Խ. Հարությունյանի «Սողոր տեսության մի բանի հարցեր» աշխատությունը հրատարակվել է Փարիզում՝ Գրանտերեն, ակադեմիկոսներ՝ Հ. Գ. Մաղարյանի «Հանրավարներ» և Բ. Ա. Ֆանաբջյանի «Ենկադենոգրադոստիկա» աշխատությունները թարգմանվել են լիանրեն, թղթակիցանդամ Մ. Ջ. Սիմոնովի աշխատությունը՝ նվերված բնտոնի և երկաթ բնտոնի շինվածքներին, հրատարակվել է Պրոսպարում շիններն: Մյուս կողմից մի շարք արտասահմանյան գիտնականների աշխատություններ յույս կոնսենս մեր Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ, դրանցից է Չեխոսլովակիայի հայազետ Հ. Մարտիրոսյանի հայերեն թարգմանած «Բիզլամիչ» հնագույն արևելյան գյուղազնավագր «Պատմաբանասիրական հանգեսում» յույս կրնծայվեն արտասահմանյան գիտնականների հոգիածները: Հայկական ՍՍԻ ԳԱ մի շարք անվանի գիտնականներ վերջին տարիներին ընտրվել են արտասահմանյան երկրների ակադեմիաների անդամներ: Այսպես՝ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը ընտրվել է Գերմանական, Ավստրիական և Ֆրանսիական ակադեմիաների թղթակիցանդամ, իսկ այս տարի՝ Ամերիկյան Արվեստների և Գիտությունների ակադեմիայի (Քոնտոն) պատմավոր անդամ, ԳԱ ակադ. Խ. Ս. Կոչոտյանը՝ Հունգարական ակադեմիայի պատվավոս անդամ, իսկ Ի. Վ. Եղիազարյանը՝ Տուրուզայի (Ֆրանսիա) Գիտությունների ակադեմիայի թղթակիցանդամ, Ակադեմիայի գիտնականները, համկապես վերջին տարիներին, քաղմիջս մասնակցել են մի շարք միջազգային գիտական համագումարների, կոնգրեսների, սիմպոզիումների, կոչորիումների աշխատանքներին, որտեղ հանգես են եկել ղեկուցումներով Բոցի դրանից արտասահմանյան գործուղան մեչ են եղել (Բուլգարիա, Չեխոսլովակիա, Հունգարիա, Չինաստան, Բելգիա, Ֆրանսիա և այլն) Ակադեմիայի մի շարք գիտնականներ, որոնք ծանոթացել են այնտեղ կատարվող գիտա-հետազոտական աշխատանքներին՝ կապված իրենց կողմից մշակվող պրորիմների հետ: Բյուրականի աստղադիտարանի մի խումբ աշխատա-

կիցներ 1958 թ. ապրիլի 19-ին մասնակցեցին արևի խավարման ուղղորդման աշխատանքներին՝ Կանտոնի շրջանում (Չինաստան):

Մեծացել է նաև Հայաստանի ԳԱ այցելող արտասահմանյան գիտնականների և հյուրերի թիվը: 1957 թվականից ԳԱ Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում Չինական Ժողովրդական Ռևուլյուցիկայից ասպիրանտական ուսումնաստություն է անցկացնում Ռ. Ժուլ-Ֆիեր, որը մասնագիտանում է սողորի տեսության գծով: Բյուրականի աստրոֆիզիկական աստղագիտարանում աստրոֆիզիկայի դծով թեկնածուական գիտերտացիա պաշտպանելու համար ուսումնասիրություն է անցկացնում Բելգրադի աստղադիտարանի աշխատակից Վ. Ռսկանյանը: Մեր հյուրերի արդյունավետ աշխատանքի համար ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները: Ակադեմիան բազմաթիվ նամակներ է ստանում արտասահմանից, որոնց հեղինակները խնդրում են Հայաստանում անցկացնել ասպիրանտական ուսումնաստությունը:

Այս տարի ապրիլին մեր Ակադեմիայի Կենդանաբանության ինստիտուտն այցելեց Հելգինկիի համալսարանի պրոֆեսոր Խոկան Լինբուրգը: Ֆինն գիտնականը ծանոթացավ Կենդանաբանության ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքներին և իր գիտական աշխատանքի համար հավաքեց անհրաժեշտ նյութեր:

Մարտի կեսերին Ակադեմիա այցելած ամերիկացի փիլիսոփա Ջոն Սոմերվիլը ծանոթացավ Փիլիսոփայության սեկտորում տարվող աշխատանքներին, զրույցներ ունեցավ սեկտորի աշխատակիցների հետ, հանդես եկավ ղեկուցումով և երբ օրով Հայկական ՍՍԻ Ակադեմիայի հյուրերն էին Արարական Միացյալ Ռևուլյուցիկայի հետազնաները՝ Կահիրեի համալսարանի պրոֆեսոր Ահմեդ Ֆահրի գլխավորությամբ:

Երեք շաբաթով Հայաստան այցելեց ամերիկացի գիտնական, դոկտոր Ավետիս Մանջյանը (Հարվարդի համալսարան): Նա այցելեց հատկապես աստղաբանության բնագավառում կատարվող գիտա-հետազոտական աշխատանքներին, մեյցելու Գիտությունների ակադեմիա այցելել լին հանրահայտ ամերիկացի գրող Միտչել Ռիլսոտը, Չինական Ժողովրդական Ռևուլյուցիկայի ԳԱ Հնադիտության ինստիտուտի աշխատակիցների ղեկավարներ, որոնք ծանոթացան Պատմության ինստիտուտում տարվող աշխատանքների հետ: Գիտությունների ակադեմիա այցելեց նաև աստղադեմիաների միջազգային 10-րդ համագումարի օտարերկրյա ղեկավարների մի մեծ խումբ, որը ծանոթացավ Բյուրականի աստղադիտարանի աշխատանքներին:

Առաջիկայում է՛լ ավելի են ուժեղանալու Գեկ գիտական կապերը արտասահմանյան գիտական հաստատությունների հետ: 1959 թվականին Սերանուս նախատեսվում է դրամարկի հայազեղանների համաշխարհային առաջին կոնգրեսը, ուր կհրավիրվեն շատ հայագետներ ինչպես մեր Միությունից, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրներից:

Ռեսպուբլիկայի գիտական հիմնարկների և բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտա-հետազոտական աշխատանքները կորդինացնելու համար Հայկական ՍՍՌ Մինիստրների Մովսիս որդեամբ 1957 թվականին Ակադեմիային առընթեր ստեղծվեց Կոորդինացման խորհուրդը: Անցած երկու տարվա ընթացքում Կոորդինացման խորհուրդը ղգալի աշխատանք է կատարել գիտական և ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող պրոբլեմների մշակմամբ զբաղված գիտնականների համահեղին աշխատանքը կոմպլեկտավորելու ուղղությամբ: Այժմ Կոորդինացման խորհուրդն զբաղված է անդրկովկասյան երեք ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաներին առընթեր Կոորդինացման խորհուրդների համատեղ սեպիայի նախապատրաստությամբ, որտեղ պետք է քննարկվի երեք ռեսպուբլիկաների համար ռեզիմենայ և գիտական ու պրակտիկ խոշոր նշանակություն ունեցող կարևորագույն պրոբլեմների հետազոտման կոորդինացումը:

Նշված բոլոր հաջողությունների կողքին, սակայն, պետք է հիշատակել, որ գիտության մի շարք նյութերի զարգացման բնագավառում և հատկապես մեր երկրի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմանն օգնելու առպարեզում, Ակադեմիան ունեցել է լուրջ թերություններ, որոնք պետք է վերացվեն առաջիկա տարիներում:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXI արտահերթ համագումարը սովետական գիտության, այդ թվում և մեր Ակադեմիայի առաջ գրեց լուրջ խնդիրներ, որոնք պետք է դատնան Ակադեմիայի գիտա-հետազոտական հիմնարկների գործունեության առանց-

քը: Մեր Ակադեմիան զալիք յոթնամյակում ստանալու է 227 միլիոն ռուբլի միայն կուպիտալ ներդրումների գծով, նրա աշխատակիցների թիվն ավելի քան կրկնապատկվելու է: Կազմակերպվելու են մի շարք նոր գիտա-հետազոտական հիմնարկներ, այդ թվում Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, Գեոֆիզիկայի, էլեկտրատեխնիկայի, Մետալի, Գործիքաշինության, Բիոքիմիայի, Ռադիոբիոլոգիայի, Հնագիտության, Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտներ ու այլ հիմնարկներ: Մեր Ակադեմիայում պայմաններ կստեղծվեն ֆիզիկական, տեխնիկական, մաթեմատիկական գիտությունների, մասնագիտության հաշվիչ մաթեմատիկայի զարգացման համար: Քիմիայի ասպարեզում Ակադեմիան պետք է լուրջ ուշադրություն դարձնի ծանր և նուրբ օրգանական սինթեզի գծով տարվող աշխատանքներին՝ կապված պոլիմերների և բիոլոգիական սկալիլ պրոպարատների ստացման հետ: Պետք է հասնել այն րանին, որ կենսատնտեսության և բժշկության մեջ կիրառվեն ֆիզիկական և քիմիական նորագույն մեթոդները, զարգանան բիոֆիզիկան, բիոքիմիան, ագրոքիմիան, գենետիկան, բջջաբանությունը, վիրուսբան, Ակադեմիայի 7-ամյա զարգացումը կսպահնովի նաև հասարակական գիտությունների վերելքը պատմության, տնտեսագիտության, զրականության, փիլիսոփայության, լեզվի, արվեստի, արևելագիտության, հնագիտության և այլ բնագավառներում:

Այսպիսով, Հայկական ՍՍՌ Գեկ-ի առաջ դրվում են լուրջ և պատվավոր խնդիրներ և, որպես Սովետական Միության խոշոր գիտական կենտրոններից մեկը, նա պետք է տրամադրի իր բոլոր ուժերը մեր երկրում գիտության, տեխնիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության, բժշկության, կուլտուրայի և արվեստի զարգացման համար, որով և իր ավանդը կմուծի կոմունիզմի կառուցման մեծ գործում:

Հ. Ն. ԲԱՆԻՆԻԱՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գեկ  
Ակադեմիկոս-քարտուղար